

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետի (ծածկագիր 3.2-2) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

18. 07. 2019թ.

### 1. Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետը (ծածկագիր 3.2-2)

ա/ կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին պատշաճ և որակով

բ/ ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը .

գ/ աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ ապահովում է համայնքի ղեկավարի, համայնքի ղեկավարի տեղակալի հանձնարարությունների և առաջարկությունների ինչպես նաև աշխատակազմի քարտուղարի ցուցումների կատարումը և արդյունքների մասին տեղեկացնում աշխատակազմի քարտուղարին.

դ/ համայնքի տարածքում առևտրի սպասարկման օբյեկտներում կատարում է ուսումնասիրություններ, իրականացնում է ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառքի, ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքի գանձում

ե/ իրականացնում է բացօթյա առևտրի, գազի և վառելիքաքսուքային նյութերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքի գանձում

զ/ իրականացնում է գովազդի տեղադրման թույլտվության համար տեղական տուրքի գանձում

է/ իր իազորությունների շրջանակներում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, զեկուցագրեր և այլ գրություններ.

ը/ իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ.

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) առնվազն միջնակարգ կրթություն

բ/ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության , «Համայնքային ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Տեղական տուրքերի մասին», «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ/ տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը

դ/ ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

Մրցույթը կկայանա 2019 թվականի օգոստոսի 23-ին, համապատասխանաբար ժամը 14:00 –ին՝ Մեծամորի համայնքապետարանի շենքում:

Փաստաթղթերի ներկայացման վերջին ժամկետն է 2019 թվականի օգոստոսի 8-ը:

Դիմող ՀՀ քաղաքացիները Մեծամորի համայնքապետարան կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- դիմում մրցույթային հանձնաժողովի անունով (լրացվում է փաստաթղթեր ներկայացնելիս)
- տվյալ պաշտոնները զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, դիպլոմների, վկայականների, աշխատանքային գրքույկի պատճենները բնօրինակների հետ միասին:
- արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը բնօրինակի հետ միասին.
- մեկ լուսանկար 3x4 սմ չափի
- անձնագրի պատճենը

Փաստաթղթերն ընդունում է Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմը կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմը

Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, համայնքապետարանի վարչական շենք

Հեռ. 0237/34441, Էլ. փոստ՝ [metsamormeria@yandex.ru](mailto:metsamormeria@yandex.ru)

Հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ, ք. Արմավիր, Աբովյան 71 Հեռ.՝ 0237 /20770

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, ժամը 9<sup>00</sup>-ից մինչև 17<sup>00</sup>, բացի շաբաթ և կիրակի օրերից: